



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2 փետրվարի 2018թ. թիվ 8

**ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԻՄԱՆՆ ԻՌԳՂՎԱԾ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 23.01.2018թ. թիվ ԱԱ/ԱԿ-2-5/575-18 գրությունը՝

Կ ա Ր Գ ա Դ ի Ր ու մ եմ.

1. Հաստատել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառմանն ուղղված՝ նախորդ տարվա ընթացքում ՀՀ Լոռու մարզում կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների /այսուհետ՝ Հաշվետվություն/ ձևերը՝ համաձայն հավելվածի:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովին /այսուհետ՝ Հանձնաժողով/՝

1) Սույն կարգադրության մասին տեղեկացնել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին, մարզում գործող սոցիալական, կրթական, առողջապահական հաստատություններին, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակական կազմակերպություններին:

2) Կազմակերպել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 10-ը սույն կարգադրության 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված կազմակերպություններից Ձև1-ին համապատասխան տարեկան հաշվետվությունների հավաքագրումը:

3) Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը Հաշվետվությունը ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի քարտուղարին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյանի վրա:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 2
ք.Վանաձոր